Մարդու իրավունքների հիմնախնդիրները ՀՀ զինված ուժերում

ՀՀ զինված ուժերը ձևավորվել են ղարաբաղյան հակամարտության ռազմական գործողությունների ընթացքում՝ հանդես գալով որպես անվտանգության միակ երաշխավորը և որպես այդպիսին շարունակում են պահպանել իրենց կարգավիճակը առկայությամբ պայմանավորված զինված ուժերը Հայաստանի Հանրապետությունում 1994 թ. մայիսի 12-ի զինադադարից հետո:
Նման ընկալումը հանգեցրել է զինված ուժերի անձեռնմխելիության կարգավիճակի ձևավորմանը, որը էական և բացասական ազդեցություն է թողել պաշտպանության բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորման վրա: Մասնավորապես, 2003 թ-ի . ընդունված <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքը, որն ընդունվել է ԵԽ-ին 2001 թ-ի հունվարին ՀՀ անդամագրումից հետո, հանդիսացավ <մեռյալ>, չգործող օրենք, քանի որ հակասում էր այլընտրանքային ծառայություն ընտրելու եւ իրականացնելու մարդու իրավունքների չափանիշներին: Օրենքում փոփոխություններ կատարվեցին միայն 2013 թ-ի հունիսին Եվրոպական դատարանի կողմից ՀՀ նկատմամբ Եհովայի վկաների գործերով խախտումներ արձանագրելուց հետո: Այնուամենայնիվ, <Այլընտրանքային ծառայության մասին> ՀՀ օրենքը չի ապահովում զինվորական ծառայության ընթացքում այլընտրանքային ծառայություն անցնելու քաղաքացիների իրավունքը: 2005 թ-ի սահմանադրական փոփոխություններով արձանագրվեց զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության դրույթը /ՀՀ Սահմանադրության 8.2 հոդված/: Իրականում, մինչ այժմ, զինված ուժերի նկատմամբ նույնիսկ պատշաճ պառլամենտական վերահսկողության ինստիտուտ չի ձևավորված: Զինված ուժերի բնագավառում իրականացվում են մի շարք բարեփոխումներ, մասնավորապես պաշտպանության նախարարության աշխատակազմի մի հատվածի անցումը քաղաքացիական ծառայության, սակայն պաշտպանության գերատեսչության հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների խատման կանխարգելման հարցերում շարունակում է համարվել որպես պետական և ծառայողական գաղտնիք: Մասնավորապես՝ գաղտնիք են համարվում մահացած զինծառայողների անուն ազգանունները, զորակոչի ենթարկվածների թիվը, կանոնադրական հարաբերությունների խախտման և հարուցված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրությունը:
Զինված ուժերում մարդու իրավունքների խախտման մասին տվյալներին հիմնականում հանրությունը տեղեկանում է մահացությունների փաստերով հարուցված քրեական գործերի նյութերի միջոցով: Ըստ որոշ գնահատականների՝ 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության զինադադարից մինչև 2013 թ-ը ՀՀ զինված ուժերում մահացությունների թիվը մոտ 3000 է: Առանձին ուսումնասիրություններով այդ թիվը կազմում է 1500 հոգի: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունների համաձայն՝ 2010 թ-ից մինչև 2014 թ-ի առաջին եռամսյակը մահացությունների թիվը կազմել է 185 մարդ, որից 41-ը մահացել է հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով /ընդհանուր

մահացությունների 22 %-ը/: Նշենք, որ մինչ նման տարանջատումը պաշտպանական գերատեսչությունը զինված ուժերում մահացության դեպքերը պայմանավորում էր զինադադարի ռեժիմի խախտմամբ և դրանում մեղադրում հակառակորդին:

Զինված ուժերում մահվան գործերի քրեական գործերի ուսումնասիրության հիման վրա արձանագրում ենք մարդու իրավունքների խախտման հետևյալ պատճառները.

Առողջական խնդիրներով երիտասարդներին զորակոչի ենթարկելը

Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների գերակայումը սահմանված կարգապահական կանոնների նկատմամբ, որն ապահովում է որոշ ծառայողների նկատմամբ պաշտոնով և լիազորություններով չպայմանավորված վերահսկողներ /քրեակատարողական հիմնարկներում զոն նայողների նմանությամբ// CAT[1], CCPR[2]/

Ներքին վարչական բողոքարկման մեխանիզմների անհստակությունը և անորոշությունը

Ներքին կարգապահական իրավական փաստաթղթերում զինծառայողների մարդու իրավունքների վերաբերյալ դրույթների բացակայությունը

Պաշտպանության նպատակով պետական գնումների գաղտնիությունը և կոռուպցիոն ռիսկերը

Արդար դատաքննության իրավունքի խախտումները, որի արդյունքում իրավական գնահատական չեն ստանում հրամանատարների ապօրինի գործողությունները և անհիմն մեղադրանք է առաջադրվում և մեղադրական վճիռ է կայացվում զինծառայողների նկատամամբ

Ոչ պատշաճ բժշկական զննությունը և ծառայության տրամադրումը, որի հետևանքով ոչ միայն առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիներն են ճանաչվում պիտանի զինծառայությանը, այլև ծառայության ընթացքում զինծառայողները ձեռք են բերում առողջական խնդիրներ, որը հանգեցում է մահացության դեպքերի

Զինծառայողները իրենց նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական ճնշումների ու բռնությունների վերաբերյալ, որպես կանոն, վախենում են ահազանգել կամ բողոքել, քանի որ զգուշանում են հետագա ճնշումներից և ավելի անմարդկային վերաբերմունքից: Որոշ դեպքերում նման իրավիճակում զինվորները դիմում են ինքնասպանության: Միևնույն ժամանակ, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ինքնսպանության վարկածով փորձ է արվում քողարկել իրական սպանությունը: Համակարգային լուրջ խնդիր է այս տեսակետից քրեական գործերի վարումը քննչական ծառայության կողմից, որը հանդիսանում է ՀՀ ՊՆ ստորաբաժանում: Ի դեպ ներկայումս կա այդպիսի նախագիծ՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը և

[1] CAT Concluding observations on Armenia, 2012 http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT%2fC%2fARM%2fCO%2f3&Lang=en

[2] CCPR Concluding observations on Armenia, 2012 http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fCO%2f2&Lang=en

ոստիկանության գլխավոր քննչական վարչությունը դուրս բերել գերատեսչությունների կազմից և ձևավորել միասնական քննչական կոմիտե Զինծառայողների մահացությունների դեպքերով դատաքննությունների ընթացքում պարզվում է, որ որպես վկա գործում ներգրավված զինծառայողները փաստացի անազտության մեջ են պահվել ռազմական ոստիկանության կողմից, և այդ ընթացքում ցուցմունքներ կորզելու նպատակով ենթարկվել են ֆիզիկական բռնությունների: Նման փաստերը ուշադրության չեն արժանանում զինվորական դատախազության և դատարանների կողմից: Մյուս կողմից, մտահոգիչ է ռազմական ոստիկանության անվերահսկելի գործունեությունը
Բազմիցս բարձրացրել ենք առանձին զինվորական օմբուդսմենի ինստիտուտի անհրաժեշտության հարցը, քանի որ ՀՀ օմբուդսմենի ինստիտուտը չունի մարդկային, ֆինանսական և տեխնիկական զինծառայողների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ռեսուրսներ: Միայն 2014 թ-ի փետրվարին մարդու իրավունքների ռազմավարության գործողությունների պլանում ներառվել է ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման պարտավորությունը:
Անընդունելի է զինված ուժերի ստորաբաժանումների օգտագործումը ներքաղաքական նպատակներով և խաղաղ քաղաքացիների նկատմամբ: 2014 թ. մայիսի 15-ին հրազենային վնասվածքից մահացած ժամկետային զինծառայող Լյուքս Ստեփանյանի հարազատները, համագյուղացիները, զինծառայողի սպանության պատշաճ քննության պահանջով, մայիսի 18-ին կազմակերպել էին բողոքի երթ՝ փորձելով երիտասարդի դին տեղափոխել ՀՀ Կառավարության շենքի մոտ3: Սևան – Երևան մայրուղում բողոքի երթը խոչընդոտվել էր ոչ միայն ոստիկանության, այլև ռազմական ոստիկանության և զինված ուժերի այլ ստորաբաժանումների կողմից: ՀՀ պաշտպանության նախարարի ՀՀ ոստիկանապետի ՀՀ զինվորական դատախազի անմիջական ներկայությամբ բռնություններ էին կիրառվել երթի մասնակիցների նկատմամբ4: Զինված ուժերի ստորաբաժանումները օգտագործվել էին նաև 2008 թ. մարտի 1-2-ին նախագահական ընտրություններին հաջորդող խաղաղ հավաքների ժամանակ, ինչի արդյունքում սպանվեց առնվազն 10 քաղաքացի, որոնց սպանության հանգամանքները և մեղավորները այդպես էլ չբացահայտվեցին: /CPT5, PACE6/
Զու մարդու իրավունքների վերաբերյալ մտահոգությունները, որոնք արձանագրված են միջազգային փաստաթղթերում շարունակում են մնալ արդիական, քանի որ չեն իրականացվել անհրաժեշտ ինստիտուցիոնալ, իրավական փոփոխություններ իրավիճակը փոխելու ուղղությամբ:

[3] Լյուքս Ստեփանյանի հարազատները պայքարելու են մինչև վերջ, http://hcav.am/events/լյուքս-ստեփանյանի-հարազատները-պայքա/
[4] Սևան-Երևան մայրուղին զինավարժությունների երթուղի, http://hcav.am/events/սևան-երևան-մայրուղին-զինավարժությու/
[5] CPT Report to the Armenian Government, 2010 http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf
[6] PACE, The implementation by Armenia of Assembly Resolutions 1609 (2008) and 1620 (2008) http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?fileid=17699&lang=EN&search=bWFyY2h8dHlwZV9zdHJfZW46UmVzb2x1dGlvbnxzdWJqZWN0X3N0cl9lbjpBcm1lbmlh